№ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԲԻՒՐ, № 10.

Ա. Բաժին

Ով չուտ, նա կուտ (*պատկեր ոտանաւորով*).—Ս.: Պոչատ կատուի պատմութիւնը.—*Տիկ. Շ. Կուրղինեան*: Նախանձոտ օձը *առակ* (*ոտանաւոր*).—*Արեւշատ*: Գիւղացին ինչպէս է բաժանում սագերը (*պատկերով*).—*Բաբբունի*: Աշնանը *Լենաուից* (*ոտանաւոր*).—*Գ. Բաքուրեանց*: Ծովի միջին (*Բենւենուտիից*).—*Սիմ. Ա. Պապիեանց*: Ուսուցիչ (*ոտանաւոր*).—*Խ. Բաբայեանց*: Ծաղիկների մէջ (*կըշարունակուի*).—Կ. Կ. *Մելիք-Շահնազարեանց*: Նմուշներ.—*Տէր-Ներսէս Նիկողոսեան*: Օձեր (*պատկեր*):

Զ ւ ա ր ճ ա լ ի ք

Հանելուկներ: Բացատրութիւններ:

Բ. Բաժին.

Թելադրութի՞ւնը, թէ որ և է ոտանաւորի ուղիղ գրել սովորելը (*կըշարունակուի*).—*Մարտիրոս Ղահրամանեանց*: *Մատենախօսութիւն*: Եասի արկածները.—W.

Այլ և այլք:

Յայտարարութիւններ:

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

յաւելուածով դաստիարակների համար

XVIII ՏԱՐԻ № 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900 Թ.

ԹԻՓԼԻՍ
Տպարան Կ. Մարտիրոսեանցի. ||| Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1|2.
1900

Дозволено цензурою Тифлисъ, 30-го октября 1900 г.

Ով չուստ, Նա կուց

ՈՎ ՋՈՒՍՏ, ՆԱ ԿՈՒՇՏ

Փափլիկ Մուրէնը
Խաղաց խաղաց,
Ցատթուչկոտալուց
...ոգնեց ախրեց,
...ուն խաղալիկն
Ձգելով

Իր ննջարանի
Մօտ նա վազեց:
Բայց ուշ էր արդէն.
Խելօք փիսան
Սուսիկ-փուսիկ
Նրա անկողնում
Պառկած հանգիստ՝
Մռմռում էր
Եւ մեր Սուրէնին
Աչքով անում...

Ս.

ՊՈՉԱՏ ԿԱՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

—

«Ես կըպատմեմ ձեզ ե-րեխայք, թէ ի՞նչու զրկուած եմ պոչից ու ականջներից», ասաց պոչատ կատուն, նըստելով լուսամուտի առաջ, երեխաների դիմացը:

Իմ մայրը հարուստ աղայի տան կատու էր. նա շատ գեղեցիկ էր, հաւատարիմ ու քաջ. տնեցիք բոլորը նրան սիրում էին. բայց դա եր-կար չըտևեց. մայրս ունեցաւ վեց հատ ձագ. մեծ տիկինը հրամայեց ծառային մօրս իր ձա-գերով տանել հին մարագում տեղաւորել:

Մայրս, որ սովոր էր միշտ տաք և մաքուր սենեակներում, փափուկ գորգերի վրայ մանգալ, ստիպուած էր իր նորածին ձագուկներով ցուրտ մարագի մի բաց անկիւնում ապրել. այդ դեռ ոչինչ, աղայի տանը մեզ շուտով մոռացան. խեղճ մայրս հազիւ էր կարողանում կերակրել մեզ: Փոքրիկ քոյրս, որ շատ թոյլ էր, մեռաւ.

միւս երկուսին թշնամի կատուն փախցրեց. մայրս շատ լաց եղաւ նրանց համար. մենք չլացինք. ուրախ խաղում, վազվզում էինք, գլորւում կեղտոտ յատակի վրայ և յոգնած քնում մօրս տաք ու փափուկ գրկում։

Մի օր մայրս ուշ տուն եկաւ գզգզուած և կեղտոտ մազերով — ահա ձեզ միս, ասաց նա, մի մեծ կտոր միս գետնին ձգելով. գողանալիս ծառան տեսաւ, դանակը ձգեց քամակիցս ու մէջքս վիրաւորեց — ես սոսկացի, բայց երբ տապակած միսն անուշ արինք, ամեն բան մոռացայ։

Այսպէս անցկացրինք մի քանի օր. մայրս տուն էր գալիս միշտ ծեծուած, ջարդուած, քարշ տալով հացի, մսի կտորներ։ Մի օր էլ մայրս հիւանդ պարկած էր. մենք քաղցած մլաւում էինք նրա շուրջը, երբ ներս մտաւ աղայի աղախինը ծառայի հետ. մենք վախեցած թաք կացանք մեր մօր ետև, իսկ նա, առանց շարժւելու, սպասում էր իր բախտի վճռին։

—«Սա գեղեցիկ է, ես կըվերցնեմ տան համար. իսկ դու, Թորոս, այդ երկու ձագին ու անպիտան գողին տար կորցրու. աչքերը պինդ փակիր, որ ճանապարհը չըտեսնի ու յետ դառ-

նայ» – ասաց բարկացած Հիքոն և ինձ վերցնելով դուրս եկաւ մարագից:

Ես տեսայ, ինչպէս անպիտան Թորոսը նրանց լցրեց պարկն ու գնաց:

Մի անգամ մօրս ու եղբայրներիս տեսայ երազումս և ամեն բան մոռացայ:

Աղայի տնեցիք ինձ շատ երես էին տալիս. ուղիղ է, առաջ մեծ ու լուսաւոր սենեակներից ես վախենում էի, դողալով ու անվստահ էի բարձրանում փափուկ տախտերի և բազկաթոռների վրայ, բայց քիչ-քիչ ընտելացայ և ամեն մի սենեակի դուռ բաց էր ինձ համար. էլ չէի վախենում այն մեծ-մեծ հայելիներից, կարծելով թէ ուրիշ կատու կայ նրանց մէջ: Ազատ համարձակ բարձրանում էի մետաքսեայ փափուկ բարձերին, նոյնիսկ բաժակների մէջ մտնում, նստում, խաղում վազվզում, ոչ ոքից երկիւղ չունենալով: Ծերուկ պապը ինձ ամենից շատ էր սիրում. նստացնում էր ծնկներին, փաղաքշում ու իր բերնի պատառը ինձ ուտացնում:

Այսպէս անցկացրի ձմեռը. ես ինձ առաջուայ նման երջանիկ չէի զգում, կարծես մի բան ինձ պակասում էր, իսկ թէ ի՞նչ, ես էլ չըգիտէի. միշտ միևնոյն մարդիկ, միևնոյն փաղաք-

չանքը, միեւնոյն խաղը ինձ սկսել էր ձանձրացնել. սկսել էի չարանալ. պատահած ամանը

կամ շուռ էի տալիս, կամ կոտրում, ճանկռտում էի երեխաներին, կծոտում պապի դողդողացող ձեռքերը և կամ սենեակից սենեակ ընկնելով անախորժ մըլաւում։

Մի անգամ, երբ պարտիզում տաքանում էի գարնան արեւի տակ, ինձ մօտեցաւ մի ահագին բրդոտ կատու. ես սաստիկ վախեցայ նրա մեծ-մեծ աչքերից և տեղիցս չը-

կարողացայ չարժւել: Նա երկար խօսեց, բայց ես չլսեցի ու փախայ տուն. ամբողջ օրը մտածում էի բրդոտի ասածների վրայ: Միւս օրը կրկին գնացի պարտէզ, բրդոտը այնտեղ էր. ես այս անգամ լսեցի նրան ու հետը գնացի: Մենք բարձրացանք մի կտրի վրայ, որտեղ կային էլի չորս կատուներ. Նրանք կռւում էին մի հաւի գլխի համար. բրդոտը վրայ վազեց, ծեծեց կատուներին ու ցեխոտւած հաւի գլուխը ուտելով ասաց.— «Տես, այսպէս ճարպիկ պիտի լինիս, որ քաղցից չըմեռնես» — ես սոսկացի. այդպիսի ոսերով չէր մայրս կերակրում մեզ մարագում: Միւս օրը գնացի, բոլորն էլ այնտեղ էին. ինձ մի լաւ ծեծեցին որ դատարկ էի գընացել:

Ամեն գնալիս սկսեցի տանել նրանց հացի, մսի կտորներ. Նրանք ուտում էին, ինձ բաժին չէին տալիս. շատ անգամ էլ ծեծում էին, որ քիչ եմ տանում: Քաղցած փորով տուն էի գալիս, ծածուկ մտնում էի խոհանոց և մի բան գտնելով ուտում:

Սկզբում գողութիւններս ծածուկ էին մնում, բայց մի սև օր, երբ զամբիւղից մի մեծ կտոր միս հանեցի, ներս մտաւ խոհարարուհին, ուզա-

ծին պէս թակեց ու բարձր սանդուղքներից վայր շպրտեց գոռալով.

«Հազար անգամ ասացի, որ գող կատուի ձագը չըբերեն, բայց լսող չեղաւ»:

Այդ վիրաւորանքը ես չըմոռացայ. միւս օրը յաջողութեամբ փախցրի մի տապակած ճուտ, բայց ընկերներիս չըտարայ. չէի գժուել. մի ապահով տեղ թակ կացայ ու կուշտ կերայ: Երեկոյեան երբ տուն գնացի, չար խոհարարուհին բռնեց ու անպիտան Թորոսի հետ, կացնի մի հարուածով պոչս կտրեց: Գնացի ընկերներիս մօտ ու պատմեցի ինձ պատահած անբախտութիւնը. Նրանք երբ իմացան, որ առանց իրանց մի ամբողջ ճուտ եմ կերել, ծեծեցին և կտուրից վայր գլորեցին: Մի շաբաթ քաղցած թափառելուց յետոյ, ծածուկ տուն մտայ: Փոքրիկ Վաղիկը ինձ գրկեց և տարաւ սեղանատուն: «Փիսիկ ջան, այստեղ կա՛ց, սայլակս բերեմ քեզ լծեմ՝ խաղանք»:

Սեղանի վրայ դրած թարմ կարկանդակների հոտով լցուած էր սենեակը. և ի՛նչպիսի կարկանդակներ. հինգ հատ ուտէիր, չէիր կըշտանալ, այնքան համեղ էր պատրաստում տիկինը: Ուզում էի թռչել սեղանին ու գոնէ մի հատ

փախցնել. բայց անպիտան Թորոսն իր սուր կացնով միտս էր գալիս։

Վերջապէս ի՞նչ գլուխներդ ցաւացնեմ, բերանիս ջուրը գնում էր. պոչս էլ մոռացայ, Թորոսին էլ. թռայ սեղանին և հէնց որ սուր ատամներս խրեցին փափուկ կարկանդակի մէջ, ներս մտաւ Վարիկը և նրա աղաղակից միւս եղբայրները. մի այնպիսի քօթակ կերայ, որ մինչև հիմա չեմ մոռացել. չարաճճիները երևի այդ քիչ համարեցին, որ չորս ոտքս էլ ամրացրին ընկոյզի դատարկ կեղևների մէջ... Օրս բոլորովին սևացաւ. ոտքերս սաստիկ աղմուկ էին բարձրացնում. էլ ի՞նչպէս կարող էի մնանել խոհանոց։ Թողի այդ տունն ու հեռացայ։

Ամբողջ օրերով դէս ու դէն էի թափառում, գողութիւններ անում, թռչուններ որսում ու մի կերպ ապրում։ Մի անգամ պատահեցի բրդոտին. նա ցաւեց իմ թշուառ վիճակի վրայ։ Նա էլ թողել էր ընկերներին. նա էլ ինձ նման քաղցած ընկել էր փողոց։ Ես ընկերացայ նրա հետ. ամբողջ օրը ցեխի ու աղբի մէջ ընկնելուց յետոյ, ոչինչ չըգտանք. քաղցը տանջում էր։

—«Այ, լաւ միտս ընկաւ. ասաց յանկարծ մեզ բրդոտը ուրախացած, եկ անցնենք միւս փողոցը, գուցէ մի բան գտնենք»։

„Դու ի՞նչ գիտես, թէ կըգտնենք“, ասեցի կասկածելով:

—Անցեալ տարի, այն փողոցի մի մեծ տան յետ ընկած մարագից փախցրի երկու թխլիկ ձագեր. նրանց մայրը իմ հին թշնամին է. գընանք այնտեղ.—ասաց բրդոտն ու վազեց:

Ես քարացած մնացի. մեր թշնամին, քոյրերիս փախցնող կատուն, իմ ընկեր բրդոտն էր եղել... Ես անցայ հակառակ փողոցը, մտայ մի բաց տուն: Վերջ տւի գողութիւններիս ու այդ տան կատուն եղայ. խաղաղ ապրում էի. բայց ինձ պէս գող կատուին այդ շատ էր. մի օր վայր ձգեցի լուսամուտի փոքրիկ ծաղկամանը. ինձ դուրս արին. փողոցի տղաները երկար չարչարեցին, կտրեցին ականջներս և ձգեցին այն ցեխոտ փոսի մէջ, որից դուք, բարի երեխայք, ազատեցիք ինձ, մաքրեցիք ու կերակրեցիք: Ահա թէ ինչու ես զրկուած եմ պոչից ու ականջներից. այդ բանում մեղաւորը ես եմ, որ իմ ապահով կեանքից յոգնած՝ փողոց ընկայ»:

Լսելով խեղճ պոչատ կատուի պատմութիւնը, երեխայքը խղճացին նրա վրայ, խօսք տւին սիրել ու իրանց կատուն շինել նրան:

Տիկ. Շ. Կուրղինեան

ՆԱԽԱՆՁՈՏ ՕՁԸ

(Առակ)

զնին ու արջը բարե-
կամացան
Եւ շատ մտերիմ ըն-
կերներ դարձան.
Օձը լսելով այս բանի մասին,
Նախանձեց նրանց, եւ այդ երկուսին
Ուզեց կռուեցնել եւ դրա համար,
Մէկ անգամ արջին դիմեց շքաքար:

—„Այ դու հաստագլուխ, ի՞նչ ես մը-
տածում,
Որ ոզնու հետը ընկեր ես դառնում.

Չըգիտե՞ս դու, որ քո ընկեր ոզնին
Չէ ասում ոչ մի լաւ խօսք քո մասին:

Միշտ եւ ամեն տեղ քեզ է բամբասում
Ամեն մէկի մօտ քո գլուխը ծաղրում.
Բայց քո առաջին ոչինչ չէ ասում,
Եւ հաւատարիմ է քեզ երեւում:

Արջը այս լսեց եւ քիթը ծռեց,
Օձի ասածին հաւատ ընծայեց.
Եւ այդ խառնակչի խօսքերից դրդւած,
Խեղճ, անմեղ ոզնուց եղաւ բաժանւած:

Այսպէս են մարդիկ. երբ որ տեսնում են
Ուրիշների մէջ բարեկամութիւն.
Մէկին միւսի մօտ վատաբանում են
Եւ կտրում ամեն յարաբերութիւն:

Արեւեան

ԳԻՒՂԱՑԻՆ ԻՆՉՊԷՍ Է ԲԱԺԱՆՈՒՄ ՍԱԳԵՐԸ



Մի գիւղում ապրում էր մի մարդ. նա ապրուստի միջոց չունէր, և այդ պատճառով էլ մի օր տեսաւ որ իր տաժանելի աշխատանքից ստացած հացը սպառւել է, մտածեց հաց խնդրել մի քաղաքացի պարոնից և որպէս զի ստացած հացը ձրի չըհամարւի, վերցրեց իր տան երկու սագերից մէկը, տապակեց և ապա տարաւ քաղաքացուն։ Պարոնը ընդունեց սագը քաղցրութեամբ և ասաց. «Շնորհակալ եմ քո այդ ընծայիդ համար, բայց չեմ իմանում թէ ինչպէս պէտք է բաժանեմ քո այդ սագը իմ ընտանիքի մէջ։ Ես ունիմ կին, 2 տղայ և 2 աղջիկ, իսկ այդ սագը ես պէտք է բաժանեմ նրանց մէջ հաւասար։ Գիւղացին ասաց ես կըբաժանեմ։ Ապա վերցնելով դանակը, կտրեց սագի գլուխը, տւեց պարոնին՝

ասելով՝ «Դու որովհետև քո ամբողջ տան գլուխն ես, առա քեզ գլուխը»․ յետոյ կտրեց յետին մասը, տուեց տիկնոջ․ «Դու որ տանն ես նստում և միշտ տան վրայ ես հողում, առա քեզ յետին մասը»․ յետոյ կտրեց թաթիկները և տուեց պարոնի որդիներին․ «Ձեզ տալիս եմ սագի ոտիկները, որպէս զի ձեր հայրական ճանապարհով ընթանաք», և վերջապէս կտրելով

թևը, տուեց աղջիկներին ասելով «Դուք շուտով տնից կըթըռչէք և դրա համար էլ առա՛ ձեզ թևերը, որպէս զի աւելի հեշտութեամբ կարողանաք թռչել․ իսկ մնացած մասը կըմնայ ինձ» և վերցրեց ամբողջ սագը։ Պարոնը ծիծաղեց և գիւղացուն վարձատրեց։

II

Այս բանը իմանալով մի հարուստ գիւղացի և կամենալով մի բան էլ ինքը կորզել քաղաքացուց, նա էլ տապակեց հինգ սագ և տարաւ պարոնի մօտ. վերջինս իր շնորհակալութիւնը յայտնելուց յետոյ ասաց. «Որովհետև ես ունեմ կին, 2 տղայ և 2 աղջիկ, այժմ չըգիտեմ թէ ինչպէս պէտք է բաժանեմ քո սագերդ մեր մէջ հաւասար. եթէ դու գիտես, ասա և այս նեղութիւնից ինձ ազատիր»: Հարուստ գիւղացին սկսեց մտածել, բայց ոչինչ չըկարողացաւ ասել:

Երբ պարոնը տեսաւ, որ չըկարողացաւ բաժանել սագերը, նա ուղարկեց աղքատ գիւղացու ետևից: Աղքատ գիւղացին եկաւ. քաղաքացին առաջարկեց բաժանել սագերը իր ընտանիքի մէջ:

Գիւղացին մի փոքր կանգ առնելուց յետոյ, վերցրեց սագերից մէկը, տուեց պարոնին և տիկնոջը ասելով՝ «Դուք այս սագի հետ միասին երեք եղաք», մէկն էլ տուեց աղջիկներին ասելով՝ «Դուք նոյնպէս երեք եղաք», մէկն էլ տուեց տղայոց և ասաց՝ «Դուք ևս երեք եղաք»: Իսկ մնացած 2 վերցրեց իրան և ասաց. «Ես ևս երեք եղայ այս սագերի հետ միասին: Կարծեմ ուղիղ բաժանեցի»: Բոլորն էլ սկսեցին ծիծաղել այս սրամիտ բաժանման վրայ, իսկ պարոնը այս անգամ էլ աւելի առատ վարձատրեց խեղճ գիւղացուն, իսկ հարուստին վռնդեց ասելով՝ «ագահութիւնը միշտ պատժւում է»:

Բաքքունի

ԱՇՆԱՆԸ

(Լենաուից)

Իմ սրտի սիրած այն գարունը գեղ,
Ո՜հ, արդէն վաղուց անցել է անհետ.
Պերճ ծաղկանց միջում, ուր ապրեց շքեղ,
Այժմ տիրել է աշուն դառնաղէտ։

Ինչպէս տխրագին թփերի միջում
Քամին ոռնում է, կոծում, հառաչում.
Տերևաթափ անտառն հոգևարք եղած՝
Խոր հառաչանք է հանում դառնացած։

Արդէն շատ շուտով պիտ անցնի տարին...
Վատ եղանակը տիրեց անտառին.
«Ասա՛, այս տարի ի՞նչպէս ապրեցար,
Երջանկութիւնից դէթ մի բան ստացա՞ր»։

—Քամու այս ոռնոցն, ահեղ և տրտում,
Անվերջ տանջանքներ հասցրել է սրտիս.
Ամենայն տարի իր հետ է բերում—
Մա՛հ տերևներիս, մա՛հ ցնորքներիս...

Գ. Բաբուրեանց

ԾՈՎԻ ՄԻՋԻՆ

(Բենւենուտիից)

I

Փոթորկալից մութ գիշեր էր։ Ծովը եռում և շառաչում էր, և ահագին ալիքները սոսկալի ձայնով ափի մօտ փշրւում էին, թրջելով եզերքի մօտ հաւաքւած մարդկանց խումբը. դրանք ձկնորսներ էին—Բոկկամարինօ ծովափնեայ գիւղի բնակիչները։ Նրանք լարւած նայում էին մութ հեռաւորութեան վրայ՝ դէպի այն կողմը, ուր ամեն գիշեր, ինչպէս պայծառ մեծ աստղ, փայլում էր Իզոլետտոյի փարոսի կրակը. այսօր կրակը չըկար։

—Այնտեղ մի բան է պատահել։ Անդրէան լապտերները չի վառել։

—Կարելի է, քնել է։

—Բայց, կարելի ճ հիւանդացել է։

—Իսկ եթէ, Աստուած մի արասցէ, մեռել է։ Միայնակ, առանց օգնութեան։

—Ո՞վ Աստուած։

—Բաւական է։ Դուք, ճշմարիտ որ մի որ և է չարիքի պատճառ կըլինէք ձեր խօսքերով։

—Այդ ճիշտ է։ Բայց և այնպէս կրակը չըկայ։ Պէտք է ուղևորուել իմանալ ինչ կայ այնտեղ։

—Ինչ լաւ մտածեցիր։ Այսպիսի փոթորկալից եղանակին։

—Գուցէ մինչև առաւօտ կըփոփոխուի... Իսկ այսպէս թողնել չի կարելի։

Այսպէս էին խօսում ձկնորսները, չըգիտենալով, թէ ինչ մտածեն այս չեղած պատահմունքի մասին, և մինչև խոր գիշերը չէին թողնում ափը։

Գիշերը ծովը մի քիչ հանդարտուեց, երկինքը պարզուեց և վաղ առաւօտեան երկու ձկնորսները համարձակ կերպով վտանգաւոր ճանապարհով գնացին դէպի Իզոլետտօ կղզին. Նրանք ոչ մի րոպէ չըտատանուեցին մտածելով միայն Անդրէայի մասին, որը այնտեղ՝ հեռաւոր փարոսում միայնակ փոթորկալից ծովի վրայ երևի օգնութեան է սպասում։

Բայց նրանք շատ տարօրինակ ընդունելութիւն գտան։

—Ո՞վքեր էք դուք։ Ի՞նչ պէտք է ձեզ։ Ո՞րտեղից էք—կոպտութեամբ հարցրեց փարոսի պահապանը անվեհեր նաւաստիներին։

—Մենք եկանք ձեզ տեսնելու,—պատասխանեցին նրան ապշած և շփոթուած ձկնորսները։—Փառք Աստծոյ, դուք ողջ և առողջ էք։

—Ինձ տեսնելո՞ւ—բարկութեամբ կանչեց Անդրէան.—Այսպիսի ժամանակ այստեղ գալ իմ առողջութեան մասին տեղեկանալու։ Բա՛, դուք ցնորուել էք, ինչ է։

—Մենք կարծեցինք... Դուք երեկ չէիք վառել լապտերը և Բոկկոմարինոյում մտածեցին, որ այստեղ մի որ և է անբախտութիւն է պատահել։

Անդրէան կանդնած էր անշարժ մի տեղում, լուռ կերպով քորելով իր երկայն սև մօրուքը։ Նա ըստ երևոյթին տատանւում էր՝ հրաւիրե՞լ արդեօք նրանց ցած իջնելու։

—Հմ...—մռմռում էր նա...—չըվառեցի լապտերները... Այդ ճշմարիտ չէ... Բայց մինչև անգամ եթէ այդպէս էլ է, եթէ ես ճշմարիտ որ չըվառեցի, միթէ այդ թոյլ տալ չէ՞ կարելի ամբողջ ժամանակը մի անգամ միայն։ Կարելի է, օրինակ՝ ես առողջ չէի զգում ինձ... բայց չէ. մտածեցէք՝ ինչ որ ուզում էք, իմ ինչ գործն է։

Այսպիսի անսպասելի և անախորժ հանդիպումից զարմացած ձկնորսները չըգիտէին, թէ ինչ պատասխանեն պահապանին։ Բայց նրանք բոլորովին շփոթւեցին և բարկացան, երբ Անդրէան խորհուրդ տւեց նրանց.

—Յետ ուղևորւեցէք։ Դուք ինձ բոլորովին պէտք չէք։

—Հա՜, այդպէս ուրեմն.—բացականչեց ձկնորսներից մինը զայրոյթից կարմրելով.—Չէ, մենք այս րոպէիս չենք վերադառնայ։ Դուք բարեհաճում էք մեզ արձակել, իսկ մենք գերադասում ենք այստեղ մնալ մի առ ժամանակ, տաքանալ ձեր կրակի առաջ և մի շիշ գինի խմել... իսկ յետոյ մենք, ի հարկէ, կըվերադառնանք։

Նրանք ցատկեցին ժայռի վրայ, կապեցին նաւակը և մտան մի փոքրիկ սենեակ, որը ծառայում էր Անդրէային խոհանոցի տեղ։ Անդրէան ծուլութեամբ, կարծես չուզելով, քիչ կրակ վառեց, բացեց մի շիշ գինի և դրեց երկու բաժակների հետ սեղանի վրայ, չարտասանելով ոչ մի խօսք։

Ձկնորսները գինին խմեցին նոյնպէս լուռ և շատ քիչ տաքացան։ Նրանք մի ինչ որ բանի մասին փսփսում էին և վճռեցին իսկոյն վերադառնալ։

—Ծովը մի քիչ հանդարտւեց—ասաց նրանցից մինը։

Նաւակը հեռացաւ ափից։ Ձկնորսները հեռանում էին յանդիմանելով և անիծելով Անդրէային, այդ անպիտանին և կոպտին, որի համար իրանք անհանգիստ եղան։ Իսկ պահապանը ժայ-

ռի ամենածայրին կանգնած՝ անհամբեր հայեացքով ճամբում էր նաւակը։ Նա, ըստ երևոյթին, շատ բաւական էր։

—Հա, հա, հա... ծիծաղում էր նա։—Նրանք ինձ խեւ լագարի տեղ դրեցին։

Է՜հ, թո՛ղ դնեն։ Ինձ չի անհանգստացնում ինչ էլ իմ մասին խօսեն...

Ես արեցի այն, ինչ որ ինձ պէտք էր, և լաւ է։

Հէնց նաւակը բոլորովին անյայտացաւ, Անդրէան սանդուղքով բարձրացաւ իր ննջարանը, կամացուկ բացեց դուռը և կանգնեց մուտքի մէջ, ուշադրութեամբ ականջ դնելով...

II

Անդրէան երբէք, մինչև անգամ մանկութեան հասակում բախտաւորութիւն չէր զգացել։

Նրա մայրը անձնասէր և քմահաճ կին էր, և երեխան չըտեսաւ նրանից ոչ փաղաքշանք և ոչ էլ խնամք։ Նրա հայրը մի կոպիտ և ժլատ մարդ էր և ամբողջ կեանքը աշխատում էր մի բանի մասին—միայն հարստանալու...

Խեղճ ձկնորսները, Բոկկամարինոյի բնակիչները, ասում էին, թէ Անդրէան ժառանգութիւն կըստանայ ոչ փոքր հարստութիւն. Նրա հայրը ունէր դարբնատուն, որը միշտ լիքն էր աշխատանքով, և բացի դրանից, գեղեցիկ տուն, ոչ քիչ հող... Եւ շատերը նախանձում էին երեխային,—ասում էին, թէ մի հազար չէ, որ հաւաքել է ժլատ Անտոնիօն։

Տղան սովորում էր հարևան քաղաքում։ Մի օր նրան փութով կանչեցին Բոկկամարինօ, ուր նա արդէն երկու տարի էր չէր եղել։ Նա հասնելով իր ծննդավայրը, միայն այժմ իմացաւ որ իր մայրը շատ ամիսներից առաջ մեռել է, չըլիշելով մահուանից առաջ իր որդուն, իսկ հայրը կորել է ծովում։ Այստեղ էլ իմացեց, որ Անտոնիօյի հարստութիւնը, որի

մասին այնքան խօսել էին, անհետ կորել է և ժառանգելն մնացել է հօր պարտքերը։ Պէտք եղաւ ծախել և տունը, և գարընատունը, և հողը և երկու տարուց յետոյ Անդրէային մնաց միայն մի փոքրիկ այգի։

Անդրէան ուրիշների մօտ ծառայել չուզեց։ Նա մտածեց, հաշւեց, թէ որքան կարող է ստանալ իր գինուց և տեսաւ, որ հազիւ իրան սնունդի համար բաւական է։

— Ե՛ս մենակ եմ.— մտածեց նա.— դուցէ ինձ պէտք կըլինի միայն չոր հաց ուտել, բայց ես ազատ կըլինեմ, ոչ ոքից չեմ լինի կախուած։

Այսպէս ապրեց նա մինչև քառասուն տարեկան հասակը, կըճատելով իր օրերը մերթ այգիում, մերթ գրքերի և լրագիրների առաջ, որ ուղարկում էր նրան առաջւայ դասընկերը։

Բայց այգին նրան համարեա ոչ մի եկամուտ չէր բերում, իսկ ընթերցումը նրան ձանձրացրեց։

Այդ ժամանակ մեռաւ փարոսի ծեր պահապանը։ Փընտրում էին նորը։

Անդրէային թւաց, որ իրան այնտեղ շատ լաւ կըլինի ծովի միջին, գրքերի, լրագիրների և ծխաքարշի հասարակութեան մէջ։ Ձկնորսները իմանալով նրա մտադրութիւնը, ասում էին որ փարոսի վրայ ապրելը շատ դժւար է, որ մշտական մենակեցութիւնից կարելի է խելագարւել. իսկ Անդրէան պատասխանում էր նրանց, որ իրան համար միևնոյնն է ուր էլ ապրի։ Նա մինչև անգամ մտածում էր, որ փարոսի վրայի կեանքը աւելի քիչ միատեսակ կըլինի, քան թէ իր այժմեան կեանքը. այնտեղ իր մշտական հոգսը կըլինի — հետևել լապտերներին, վառել նրանց...

Նա խնդրեց ստանալ այդ արձակ տեղը. նրան ընդունեցին և անյապաղ ուղարկեցին փարոսի վրայ։

Եւ շատ տարիներ ապրեց նա այնտեղ, ոչ ոքի հետ չըխօսելով, բացի ձկնորսներից, որոնք նրան ուտելիքի պաշար



Զարաճճիները լողանալիս

էին բերում։ Ամեն կիրակի, վաղ առաւօտեան փարոսի պահապանին բերում էին մի շաբաթուան պաշար, և նորից մնում էր Անդրէան խօթն օր միայնակ փոքրիկ կղզու վրայ—անհուն ծովի միջին։

Մի անգամ միայն ամբողջ ժամանակւայ ընթացքում, մոռացաւ Անդրէան վառել լապտերը—այն գիշեր, երբ Բոկկամարինոյի ձկնորսները այնքան մտածում և անհանգստանում էին նրա մասին։

III

Ձախընթաց գիշերը ծովը կատաղեց և յարձակւեց Իզոլետտօ կղզեակի վրայ։

Անդրէան արդէն վաղուց վառել էր լապտերը փարոսի վերևում և պատրաստւում էր պառկել, երբ յանկարծ նրա ականջին հասաւ մէկի կանչը։ Նա արագ դուրս եկաւ սշտարակից և սկսեց դիտել. ոչինչ, բացի քամիի օռնալուց և ալիքների ձայնից։ Շուրջը տարածւում էր խաւարը։

—Ինձ այնպէս թւաց, ինչ է,—մտածեց նա։—Բայց չէ...

Ես այնպէս պարզ լսեցի կանչը։

—Ո՞վ կայ այնտեղ,—բոլոր ոյժով կանչեց նա։—Ո՞վ կայ այնտեղ։

Բայց նրան պատասխանելու տեղ միայն քամին և ծովը կատաղում էին շուրջը։

Նա վճռեց քննել կղզեակը։ Բայց հազիւ նա լապտերը ձեռին մի քանի քայլ արեց, երբ քիչ էր մնացել չըքարանար զարմանքից, տեսնելով ժայռի փոսերից մինում անշարժ, գըլխից մինչև ոտքը թրջւած մի երեխայ։ Կարելի էր մտածել, որ մինի հոգացող ձեռները դրել են նրան այստեղ ժայռի խոռութեան մէջ, որտեղից ալիքները տանկարող էին նրան տանել։

—Ի՞նչ է այս—մտածեց Անդրէան.—Մի՞թէ փոթորիկը։

Ո՞ւմ հետ է նա այստեղ ընկել... Ոչ ոք չըկայ... Երևի խեղդւել են...

Մի ժամից երեխան պառկած էր Անդրէայի անկողնում, հոգատարութեամբ ծածկած վերմակներով, և քիչ-քիչ խելքի էր գալիս։ Ջուտով նա շարժւեց, բացեց աչքերը, նայեց շուրջը և կամաց շշնջաց.

—Հայրի՜կ...

Կոպիտ ձեռքը զուտ հայրական մեղմութեամբ հանգչեց երեխայի գլխի վրայ։

Ամբողջ գիշերը և ամբողջ յաջորդ օրը Անդրէան չէր հեռանում անկողնից։

—Նա հիւանդ է,—ասում էր Անդրէան նայելով երեխայի վրայ, որը անկողնի մէջ շուռ ու մուռ էր գալիս։

—Տէր իմ Աստւած։ Ի՞նչ կըլինի, եթէ նա այստեղ մեռնի. ո՛չ, ո՛չ։ Ես կըպահեմ նրան։ Ես ուզում եմ, որ նա ապրի։ Ես կըփրկեմ նրան։

Նա տաքացնում էր երեխային, ինչպէս մայր սեղմելով նրան իր կրծքին։ Նոր զգացմունք ծագեց նրա սրտի մէջ և տիրեց նրան։ Այդ օրը նա մոռացաւ բոլորին, մոռացաւ ինքն իրան, իսկ գիշերը մոռացաւ վառել լապտերը։

Առաւօտեան Թիերի անսպասելի ձայնը հարկադրեց նրան խելքի գալ. նա շփոթւեց և գաղտնի ձայնը շշնջում էր նրան.

—Զըտաս նրան։ Նա քոնն է։ Նա քո գանձն է։

Անդրէան կոպիտ կերպով ընդունեց երկու ձկնորսներին, որոնք եկել էին Բոկկամարինոյից նրան տեսութեան, և շուտով ճանապարհ դրեց նրանց կըղզեակից։

Բայց հէնց նաւակը Թագնւեց աչքերից, նա իսկոյն դարձաւ դէպի երեխան։

Տղան խոր քնում էր։ Նայելով երեխայի վրայ, այս շէկ մազերով գլխին, որը պառկած էր իր բարձի վրայ, Անդրէան այնպիսի ուրախութիւն զգաց, որ բախտաւոր ժպիտը,

գուցէ կեանքի մէջ առաջին անգամը լուսաւորեց նրա խոժոռ դէմքը։

Մի քանի օրից յետոյ Կարլետտոն,—այսպէս էին կոչում երեխային,—բոլորովին առողջացաւ։ Այս ժամանակւանից Անդրէայի համար սկսւեց նոր կեանք։ Նա բարձրանում և ցած էր իջնում սանդուղքների վրայով ոչ մի րոպէ չըբաժանւելով Կարլետտոյից։

Նա ցոյց էր տալիս նրան, թէ ինչպէս են վառում լապտերը, ինչպէս մաքրում, ինչպէս մարում. յաճախ երեխային իր ծնկների վրայ նստեցնելով նա պատմում էր նրան հէքիաթներ։ Նա ինքն շատ քիչ էր ուտում, որպէսզի միայն իր երեխան կարողանար լաւ ուտել։ Եւ այս ամենը լցնում էր Անդրէայի սիրտը մի ուրախութեամբ, որ մինչև այդ ժամանակ նա չէր զգացել. մանաւանդ նա սիրում էր շրջել կղզեակի մէջ Կարլետտոյի ձեռքից բռնած։

Անդրէայի ամենամեծ, ամենալուրջ հոգսն էր ինչ էլ որ չըլինի, թագցնել երեխային։

Միայն,—ասում էր նա ինքն իրան,—ձկնորսները, որոնք ինձ կիրակի օրերը ուտելիք են բերում, չիմանային նրա մասին. և նա ուզելով ծածկել իր գաղտնիքը, գերադասում էր չըկշտանալ, չըխմել այնքան, որքան ուզում էր սիրտը, քան թէ խնդրել որ սնունդը աւելացնեն, ապա թէ ոչ այն ժամանակ նրանք երևի կըցանկանան իմանալ, թէ ինչու պէտք եղաւ աւելացնելու։

Այսպէս անցաւ մի քանի ամիս։ Անդրէան տանում էր իր կամաւոր քաղցը։ Միշտ մռայլը և լուռը այժմ փոխւեց ուրախ և խօսակցութիւն սիրող մարդու։

Միայն երբ մօտենում էր կիրակին, Կարլետտոն նրան տեսնում էր մռայլ և սրտոտ. նա փակում էր Կարլետտոյին փարոսի ամենավերջին սենեակում և բաց չէր թողնում քանի որ Բռկ-

կամուրջինոյից եկած նաւակը կզզեակի մօտ էր գտնւում, մնացեալ ժամանակը Կարլետտոն նրա հրամայողն էր և կուռքը:

Բայց ահա մի կիրակի առաւօտ կղզեակին մօտեցող ձկնորսները տեսան, որ աշտարակի ամենավերջին պատուհանից նրանց վրայ էր նայում մի գեղեցիկ և վարդագոյն դէմք:

—Մէկ նայիր,—ասաց ձկնորսներից մինը,—ախր այնտեղ երեխայ կայ:

—Այո, այո,—հաստատեց միւսը:

—Հա, հա, հա... այ քեզ բան... Անդրէան երեխայ ունի...

Եւ իջնելով ժայռի վրայ, ձկնորսները սկսեցին հանաքանել Անդրէայի հետ և հարցնել նրա «ընտանիքի» մասին:

Պահապանը տեսնելով որ իր գաղտնիքը բացւել է, սաստիկ գունաթափւեց և դողդողաց ոտքից մինչև գլուխ: Սկզբում նա պատասխանում էր անկարգ և անկապ, բայց յետոյ վճռեց ասել ճշմարիտը: Ո՜հ, ինչպիսի ուրախութեամբ նա ծովը կըձգէր այս ձկնորսներին:

Երբ պատմութիւնը վերջացաւ, ձկնորսներից մինը ասաց.

—Այդ տեսակ բան: Իսկ մեզ մօտ մի կին վշտից մեռնում է ցերեկները և գիշերները նա անց է կացնում ծովի ափին, սպասելով իր ամուսնուն,—նա իր տղի հետ գնաց ծովը և կորաւ... Ոչ մի լուր նրա մասին: Այդ, երևի նրա որդին է,—խօսելն անգամ աւելորդ է... Ինչու Անդրէան այդ մասին առաջ չասաց: Ի՞նչու: Զըմտածեց արդեօք նա, թէ երեխան երկնքից է ընկել, թէ նա ոչ ոքին չի պատկանում:

Անդրէան լուռ լսում էր այս յանդիմանութիւնները, գլուխը կրծքի վրայ կախած և աչքերը չըբարձրացնելով: Դուրս գալով իր այդ դրութիւնից, նա դողդոջուն ձայնով ասաց.

—Առէք նրան. ես չէի կարծում, թէ նա մայր ունի...

Ես չեմ ուզում նրան մօրից խլել... Չեմ ուզում... Ուղևորուեցէք և շուտով ասացէք այդ—խեղճ կնօջը, որ նրա երեխան ողջ է և առողջ... Չէ. սպասեցէք առէք նրան այժմ հետներդ և տարէք նրա մօտ։ Այժմ իսկ...

Անդրէան գլուխը կախած բարձրացաւ աշտարակի վերին սենեակը և գտաւ Կարլետոյին։ Նա պինդ սեղմեց նրան իր կրծքին և համբոյրներ թափեց շէկ մազերին։ Երեխան լացեց Անդրէայի հետ բաժանուելու ժամանակ և այդ արցունքները ուրախացրին պահապանին։ Նա այլ ևս մի անգամ համբուրեց երեխային և յանձնեց նրան ձկնորսներին։

Կամաց և աւելի կամաց էր հասնում Անդրէային թիերի ձայնը, հետզհետէ փոքրանում էր նաւակը, որը տանում էր ձկնորսներին և Կարլետոյին, և վերջապէս բոլորովին անյայտացաւ հեռաւորութեան մէջ։

Արցունքը աչքերին, տխուր և ընկճւած մտաւ Անդրէան իր փոքրիկ սենեակը. նա վճռեց բոլորովին մոռանալ, բոլորովին ջնջել իր յիշողութիւնից այս բոլոր պատմութիւնը և պարապւել գրքերով, որ արդէն մի քանի ամիսներ թողել էր։ Սակայն և այդ օրը, և յետոյ գիրքը բաց մնաց միևնոյն էջի վրայ։ Թախիծը յափշտակեց նրան և ամբողջ օրեր նա անց էր կացնում ժայռի ստորոտում կանգնած նայելով դէպի այն կողմը, ուր Բոլկամարինոն էր գտնւում։

Անսահման ովկիանոսը շրջապատում էր նրան ամեն կողմից և Անդրէան շուտով համոզւեց, որ այլ ևս չի կարող ապրել ծովի միջին...

Անցաւ տասն ամիս։ Անդրէան արդէն չէր ծառայում փարոսի վրայ։

Նա բացատրեց, որ իր առողջութիւնը թոյլ չի տալիս իրան ապրել բաց ծովի վրայ. բայց ձկնորսները ասում էին որ այստեղ յանցանքը Անդրէայի առողջութիւնը չէ, այլ փոքրիկ Կարլետոն է։

Անդրէան նորից աշխատում էր այգում։ Բայց նա մենակ չէ. Նրա հետ են Կարլետտոն և նրա մայրը, այժմ Անդրէայի կինը։ Անդրէան աշխատում է բոլոր յոյսով, որպէս զի Կարլետտոն մօր հետ կարիք չունենան։

Նա այժմ բոլորովին գոհ է իր վիճակից և կշտանալ չի կարողանում իր Կարլետտոյի վրայ նայելուց, որը ծովի միջին սովորցրեց նրան սիրել մարդկանց։

Սիմ. Ա. Պապիեանց

ՈՒՍՈՒՑԻՉ

Նահատակի խաչը ուսին
Ու ողջ կեանքը-վիշտ, տառապանք՝
Ծառայում է նա իր ազգին
Ու վայելում անհուն զրկանք։
Նա գործում է անակընկալ,
Հանուր շահին անձնանուէր.
Մարմնացնելով ձգտում, իդէալ՝
Տարածում է լոյս կենսաբեր։
Նա տանում է մեզ դէպի լոյս,
Ճշմարտութիւն է սովրեցնում,
Վարձատրութեան կողմից անյոյս՝
Ազնւութիւն է սերմանում։
Իրօք նրան պէտք է սիրել
Իբրև ուսման անխոնջ մշակ,
Որ միշտ գիտէ անշէջ պահել
Աստուածային շնորհի կրակ։

Խ. Բաքայեանց։

ԷՄԻԼ ՏԷՐՕ

—

ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄԷՋ

Ծերուկ այգեպանի պատմութիւնները

(Փոխադրած եւ յարմարեցրած հայ մանուկների համար)

IX

ԻՆՉՊԷՍ ԵՆ ՍՆՆԴԻՈՒՄ ԵՒ ՇՈՒՆՉ ԱՌՆՈՒՄ ԲՈՅՍԵՐԸ

—

Յովակիմը կամաց-կամաց կազդուրեց և թէև փայտով էր ման գալիս, բայց առաւօտից մինչև երեկոյ աշխատում էր, Աննիկի այգին շուտով արդարացրեց իր վրայ դրած յոյսը։

Ածուների ու թումբերի մէջ բացւել էին փառաւոր ծաղիկները՝ հարաւային երկրներին յատուկ իրանց վառվռուն և պէս-պէս գոյներով շլացնելով տեսնողին։

Պատրաստ էր և վազերով շրջապատւած կանաչ հովանոցը և այգու զանազան անկիւններում գեղեցիկ դասաւորւած հիւսած կահ կարասիքը։

Աննիկը Յովակիմից չէր հեռանում, նրա բոլոր աշխատու-

թեանց ժամանակ ներկայ էր և օգնում էր ինչքան կարողանում էր։

Նա իրան համար առանձին այգեգործական փոքրիկ գործիքներ ունէր, որոնց սովորել էր հեշտութեամբ բանեցնել։

Մի տաք կէսօրի Աննիկը ման էր գալիս ծառաստանում և շուք տեղ էր պտռում, որ տօթից ազատուի. նա ինչպէս հիւսիսում մեծացած՝ տաքին չէր դիմանում։

Յովակիմը և Արշակը այդ ժամանակ նստած էին մեծ կաղնու տակ և նախաճաշիկ էին անում։

«Այսպիսի շոգին, ի՞նչպէս էք կարողանում բան ուտել, հարցրեց Աննիկը, նրանց մօտ նստելով։

—Սովորութիւն է, պատասխանեց այգեպանը. առանց ուտելու չէ կարելի ապրել, բնութեան մէջ ամեն բան ըստ իր տեսակին սնունդ է ընդունում։

«Ամե՞նը, ծիծաղեց աղջիկը, մի՞թէ իմ ծաղիկներն էլ են ուտում։

—Ոչ միայն ուտում, այլ և շունչ էլ են առնում։

«Մե՞զ նման, զարմացմամբ հարցրեց Աննիկը։

—Այո՛, մեզ նման։

«Նրանք ի՞նչպէս են ուտում առանց բերանի։

—Նրանց բերանը իրանց արմատներն են, պատասխանեց Յովակիմը։

«Դէ, սկսւում է, մտածեց Արշակը, այժմ պապիկս կըսկսի պատմել,—ես գնամ թիթեռնիկ բռնեմ. ասաց ու ծածուկ հեռացաւ։

«Նրանք ի՞նչով են կերակրւում, զարմանքով հարցրեց Աննիկը առանց ուշ դարձնելու Արշակի փախչելու վրայ։

—Նրանք ծծում կամ կուլ են տալիս հողի մէջ գտնուած աղերը։

«Ի՞նչ աղեր։

—Այդ աղերի անունները յետոյ կիմանաք, երբ մեծանաք, այժմ միևնոյն է ձեր մտքին չի մնալ. միայն բաւա-

կան է որ իմանաք բոյսերի համար աղերը նոյնն են, ինչ որ մեզ համար հացն ու միսը։ Այդ աղերը որպէս զի կարողանան մտնել բոյսերի մէջ, պէտք է ջրի մէջ լուծուած լինեն։ Հասկացա՞ք ասածս։

«Կարծում եմ, պատասխանեց Աննիկը, ինձ թւում է թէ աղերը ջրի մէջ լուծւում են այնպէս, ինչպէս շաքարի կտորը մի բաժակ ջրում։

—Բոլորովին ճիշտ է, սիրելի օրիորդ, կատարեալ այդպէս է։ Լուծուած աղերը թափանցում են արմատներին և սնընդում ամբողջ բոյսը։ Եւ որովհետև ջուրը իր մէջ բովանդակում է լուծուած աղեր, դրա համար էլ մենք բոյսերը ջրում ենք։

«Փոխանակ ասելու—ծաղիկներին պէտք է ջուր տալ, լաւ է ասել պէտք է կերակրել, ընդմիջեց Աննիկը։

—Այո, այո, հաստատեց ծերունին, ուրախանալով որ Աննիկի պէս հասկացող աշակերտուհի ունի։

Նախաճաշը վերջացնելուց յետոյ Յովակիմը դանակով սկսեց թփերի վրայի չոր ճղները կտրել։ Ի միջի այլոց նա մի փոքրիկ շիւ էլ կտրեց այն վարդի թփից, որի մօտ Աննիկը տեսել էր գործին։

—Տեսնում էք այս հեղուկը, որ դուրս է գալիս այս կտրուած շիւղից, այս այն ջրի մէջ լուծուած աղերն են, որոնցով սննդւում են բոյսերը և աւում է սննդարար հիւթ։ Սննդարար հիւթը բոյսերի ցօղունի ու ճղների առէջքների և խողովակների միջով բարձրանում են դէպի տերևները. Նրանց մէջ հողի այն ջրային մասերը մշակւում են և սննդում բոյսին։

«Բայց ես չըգիտեմ ինչ կերպով է կատարւում սննդաւութիւնը, ասաց Աննիկը։

—Տերևները ամբողջովին ծածկուած են ջղերի ցանցով, դրանց մի մասը հում սննդարար հիւթն է բերում հասցնում տերևին, միւս մասը արդէն մշակուած պատրաստը տանում այն մասերին, որտեղ աճելութիւնն է առաջ գնում։ Բացի այդ տե-

ըսի ստորոտի վրայ հասարակ աչքով անտեսանելի բազմաթիւ ծակոտիներ կան, որոնք ասւում են ծնչառական բերաններ, որոնց միջոցաւ բոյսերը շունչ են առնում։

—Ի՞նչպէս, բոյսերը շունչ էլ են քաշում։

—Այո, այնպէս, ինչպէս մենք. չէ որ միայն սննդառութիւնը բաւական չէ մեզ, պէտք է և օդ, որ անցնի մեր թոքերը և ինչ որ կերել ենք, այդ ամենը առողջ արիւնի փոխէ, որ մեր մարմինը սնդի, մեր ոսկորները և մկանունքները ամրապնդի. շնորհիւ դրան մենք աճում ենք և ուժեղանում։

«Բայց չէ որ բոյսերը արիւն չունին։

—Ես ձեզ ասացի արդէն, որ արմատը—բոյսի բերանը ընդունում է գետնի խոնաւութիւնը, որ բարձրանում է դէպի տերևները, իսկ տերևները ծառայում են բոյսի համար ինչպէս թոքեր։

—Օդը շնչառական բերաններից անցնելով տերևի մէջ, այդ խոնաւութիւնը մշակում է մի աւելի սննդարար, թանձր ու ճերմակ գունով նիւթ պատրաստում, որ ջղերի ու խողովակների միջոցաւ անցնում է ճղներից ու բունից դէպի արմատները։ Այսպիսով սննդարար հիւթը նոյն դերն է խաղում, ինչ որ մեր արիւնը, այսինքն ամրացնում է բոյսին, կոճակներ ու աչքեր գոյացնում և շատացնում ու մեծացնում ճղները։

—Աննիկ, դու դեռ ծաղիկների մասին ես լսում. հեռւից կանչեց Արշակը մօտենալով,—բան չունիս, գնանք վազվզենք, տաքը կոտրել է։

«Այո, գնանք վազվզենք, մաքուր օդ ծծենք, որ մեր նախաճաշիկը մշակւի առողջարար արիւնի փոխւի, պատասխանեց Աննիկը, ուրախ-ուրախ նայելով ծերունուն։

—Կասես խելքը գլխին չէ, մտածեց Արշակը, վախով նայելով ընկերուհուն. բայց մի րոպէից երկուսը մոռացաւ և նետի պէս թռաւ Աննիկի ետևից, որ լայն ծառուղիով ըղլխապատառ վազում էր։

Ն. Կ. Մելիք-Տանգազարեանց

(Կըշարունակուի)

ՆՄՈՒՇՆԵՐ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՒ ԲՈՅՍԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Օձեր

—

Օձը իր տաքացնողին կըծի.— Այս առածը ժողովուրդը շատ է կրկնում ապերախտ մարդկանց վրայ խօսելիս։ Եթէ օձի այդ յատկութիւնըն էլ չըլինէր, այնուամենայնիւ կենդանական աշխարհի մէջ, կարծես, ստեղծւած է նրա համար միայն, որ ուրիշներին վնասէ։ Մեզ համար տեղեկութիւններ ունենալն առ հասարակ շատ ցանկալի բան լինելով, արժէ որ ճանաչենք և սրան, գուցէ վտանգի ժամանակ մենք մեզ չըկորցնենք, այլ հարկաւոր միջոց գործ դնելով՝ վտանգից ազատւենք։

Օձի մարմինը որդնաձև է, երկար և համարեա գլանի նման, վարի ծնօտները չեն միացած իրար հետ, իսկ վերիններըը նոյնպէս բաժան են և գանգի հետ միացած են առանձգական կապերով, որպիսի կազմութեամբ օձի բերանը բացւում է շատ լայն։ Օձը սողում է փորի վրայ յենւելով պոչին։ Նա գետնի վրայ կազմում է բեկեալ գիծ և շարժման արագութիւնը կախւած է մկանունքի ոյժից ու կմախքի-ոսկրակազմի առանձնութիւնից։ Վերջաւորութիւններ չունի, մի քանի տեսակները միայն ունին վերջաւորութեանց սկզբնածայ-



Օձեր ձու կլանելիս

րնը, որոնք երբեմն կաշւով են ծածկւած, երբեմն դուրս են ցցւած։ Ողնաշարի ողերի թիւը հասնում է 300-ի, որոնք իրար հետ միացած են կիսաշրջանաձև յօդերով. այդ պատճառով օձի մարմինը խիստ ճկուն է և մարմնի բոլոր կէտերը քսւում են այն առարկային, որի վրայ սողում է։ Նա կրծոսկրը չունի, ունի 200-ի չափ կողեր, որոնք սկսւում են 3-րդ, 4-րդ պարանոցի ողերից և շարունակւում են մինչև պոչը։ Բոլոր տեսակ օձերն էլ փորսող են տալիս, շատ քչերը կարող են ոստոստել։ Նրանց մի քանիսը կարող են ազատ լողալ։ Ջրային օձերը՝ շարժելով երկու կողմից սրւած պոչերն այս ու կողմ, մարմինը մղում են առաջ, իսկ ցամաքային օձերը՝ ջուրը ընկնելիս չեն խեղդւիլ, խորը կերպով օդ են շնչում, որ լցւում է նրանց աջ թոքի կէսը (օձերը ձախ կողմում թոք չունին, իսկ աջը ձգւած է բոլոր մարմնի երկարութեամբ) և ապա գլուխները ջրի երեսին բռնած՝ մարմնի դիրքը փոխում են այնպէս, ինչպէս շարժւում են ցամաքի վրայ։

Օձը կերակրւում է կենդանիներով, գէշ չի ուտում։ Նա իր լայն բացւող բերանով կարող է կուլ տալ իրանից 5—6 անգամ աւելի հաստ կենդանուն։ Մեծ կենդանիներով կերակրւող օձերն ստորին ծնօտի տակ ունին կաշւի սոոր ծնօտեայ պարկ։ Կերակրի անցքը, ինչպէս և ստամոքսը լայն է, իսկ աղիքները կարճ են, որովհետև մսեղէն կերակրի համար երկար աղիքներ պէտք չեն։

Արտաքին զգայարանքներից շօշափելիքն աւելի է զարգացած։ Օձը առարկաները շօշափում է իր երկճիւղ լեզւով, որ շարունակ դուրս է հանում բերանից և իսկոյն ներս քաշում լորձունոտ բերանը։ Աչքերը կոպեր չունեն, ուստի օձը որսի վրայ նայում է անթարթ աչքերով, գլուխը յետ շրջած։ Օձի կաշին շատ թափանցիկ է, այնպէս որ առարկայի պատկերը նրա մէջ ցոլանալով, միջոց է տալիս նրան ամեն կողմից տեսնելու։ Իւրաքանչիւր տարի օձը վայր է ձգում վրայի մաշկը, և յաճախ անտառներում կարելի է գտնել։

Օձերը լինում են թունաւոր և անթոյն. Թունաւոր օձի գլուխն եռանկիւնի է, սրտաձև ու ծածկւած է մանր եղջերեայ թեփերով. պոչը մարմնի մէկ հինգերորդի չափ է և ունի նըկատելի պարանոց։

Տաք երկրների օձերն աւելի մեծ են, օր. բօա, ակնոցաւոր օձ և այլն, նրանց երկարութիւնը մօտ 20 ոտք է։ Ապրում են ծառերի փեչակներում կամ ժայռերի ծերպերում։ Սիրում են ջրերին մօտիկ լինել։ Նրանք որս անելիս կպչում են ծառին պոչով կամ փաթաթւում են նրա շուրջն ու սպասում որսին։ Հէնց որ այծ, եղջերու, նոյն իսկ գոմէշ մօտենում է նրանց, իսկոյն փաթաթւում են կենդանու շուրջը, բռնում են նրա գունչը, խեղդում և ամբողջապէս կուլ տալիս։ Մեծ կենդանին պարզ կարելի է նկատել նրանց ստամոքսի մէջ, այնպէս սաստիկ է ուռած լինում, որ դժւարանում են շունչ քաշել։ Այդ պատճառով նրանք 3—4 օր քնում են, մինչև որ մարսեն. նրանց քնի ժամանակ հեշտ են սպանում։

Թունաւոր օձերի վերին ծնօտի ատամներից միջին երկուսը մեծ են լինում, որոնց կողքերին գտնւում են թունաւոր պարկերը։ Թոյնը պատրաստւում է գլխի երկու կողմերում, ծառքող մկանների մօտ գտնւած գեղձերում։ Ատամն ունի ճեղք, որով թոյնը թափւում է վէրքի մէջ։ Այդ ատամներն եթէ կոտրւին, նրանց տեղը նորերն են աճում։ Թունաւոր օձերը չեն խեղդում, այլ գալարւում են որսից որոշեալ տարածութեամբ հեռու և սպասում են նրա մօտենալուն։ Որսը գալուն պէս՝ երկարացնում են պարանոցն ու խայթում, իսկ յետոյ հանգիստ կերպով հետևում են աչքերով իրանց զոհին մինչև որ սա ջղացնցումներով տանջւի, այն ժամանակ մօտենում են նրան և կուլ տալիս։

Բոլոր օձերի թոյնը միանման չի ազդում կենդանու վրայ. նրանցից մի քանիսն անմիջապէս սպանում է մարդուն, իսկ ուրիշներինը դանդաղ է ազդում։ Ընդհանրապէս եթէ երկիրը տաք է, վէրքը խորն է, շուտ կարելի է թունաւորւել։ Տաք

մարմինը շուտ է թոյնի ներգործութեան ենթարկւում։ Օձի թոյնից աւելի շուտ մեռնում են թռչունները, յետոյ անասունները, ապա մարդիկ։ Ոզնիներին նա չի կարող վնասել։ Թոյնը ներգործում է միայն այն դէպքում, երբ կպչում է արիւնին, որի հետ շուտով տարածւում է ողջ կազմւածքի մէջ. ընդհակառակն, եթէ կաշին առողջ է, թոյնը չի ներգործիլ։ Թոյնից անվնաս մնալու համար, պէտք է ծծել, դուրս քաշել թոյնը վէրքից, միայն թէ բերանի մէջ վէրք չըլինի, մաշկը քերծւած, կամ պալարներ դուրս եկած չըպէտք է լինին։ Առ հասարակ օձի, կարիճի և այլ կատաղած կենդանիների (շան) թունաւորութիւնից ազատւելու համար, պէտք է վէրքից վերև պինդ կապել, որ արիւնը սիրտը չըգնայ, իսկ այդտեղից տարածւի։ Վէրքը լւանալ աղաջրով, բանկաներ կպցնել արիւնը դուրս քաշելու, մինչև իսկ վէրքի շուրջը պլաստիր կպցնելով, այրել վէրքը երկաթով կամ վառօդով։

Տէր-Ներսէս Նիկողոսեան



ՁԻԱՐՃԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

—

Թւաբանական Ֆօկուս

Առաջ. Ա. Սարդարեանի։

1) Դասաւորեցէք մէկից մինչև ութ (1, 2, 3, 4, 5, 6, 7, 8) թւերը և գումարեցէք միմեանց հետ այնպէս, որպէս զի ընդհանուր գումարը լինի իննհազար իննհարիւր իննսուն և ինն (9999)։

—

Առաջ. Վաղարշի։

2) Այն ինչն է,
Մի բառ ունեմ չորս տառից մի վանկանի,
Որ առաջին զարդն է ամեն սենեակի,
Եթէ սեղմեմ, ափովս մին կըլլի,
Թէ բաց թողնեմ՝ սենեակովս մին կըլլի։

—

Առաջ. Ա. Պետրոսեանցի։

3) Երկար երկար եղէգներ
Այս գիշեր մեզի հիւրեր,
Այնչափ նրանք պարեցին,
Ջահլա տարան, թրջեցին։

Առաջ. Նոյնի։

4) Թռչուններ ունիմ՝ թռչում են ծառին,
Գոյներն նմանում են կանաչ կարմիրին,
Ծառերի վրայ մի մի բոյններ են շինում,
Ոչ ղռներ ունին և ոչ հերթիկներ։

—

5) Առաջ. Մակիչի։

խա	նա	սի	բըռ
լի	րա	մը	կա
աս	ղաղ	ոհ	տղ
դա	կան	էր	նա

Սոյն վանկերը փոխադրել այնպէս, որ ստացվի Միք. Նալբանդեանցի մի ոտանաւորի երկու տողը։

—

Նախընթաց №№-ի հանելուկների բացատրութիւնը. 1) Սագ. 2) Ընկոյզ, 3) Կասկարանքը և պղինձը, 4) Մանուշակ.

1) Վարդ—Մարդ
2) Որջ—Արջ
3) Վուշ—Նուշ
4) Մրուր—Ուրուր
5) Ճահ—Ձահ
6) Ող—Աղ
7) Կաւ—Ցաւ

ԱՂԲԻՒՐ

Բ. ԲԱԺԻՆ

ԹԵԼԱԴՐՈՒԹԻ՞ՒՆԸ, ԹԷ ՈՐ ԵՒ Է ՈՏԱՆԱՒՈՐԻ ՈՒՂԻՂ ԳՐԵԼ ՍՈՎՈՐԵԼԸ

Ուղղագրութիւնը աշակերտի գլխաւոր գիտելիքներից մէկը պէտք է լինի։ Ինչ նա խօսում, պատմում, կարդում է, միևնոյն ժամանակ և՛ պէտք է իմանայ խօսածը, կարդացածը, պատմածը հարկաւոր դէպքում ուղիղ կերպով գրելով արտայայտել. այսինքն պէտք է իմանայ թէ իւրաքանչիւր խօսք ինչ տառերով է գրւում և ո՛ր խօսքից կամ նախադասութիւնից յետոյ առոգանութեան ո՛ր նշանն է դրւում. այլապէս մի սխալն անգամ կարող է ցանկացած միտքը փոխել։ Օրինակ՝ եթէ ուզում ենք ասել՝ «Ես երկրորդ յարկումն եմ ապրում» և գրում ենք այնպէս, ինչպէս այստեղ է գրւած—որ և ուղիղ է—այն ժամանակ արդէն ստանում ենք մի հասկանալի, ուղիղ նախադասութիւն, որի իւրաքանչիւր խօսքի տառերը ուղիղ են գործածւած։ Իսկ եթէ կամենալով միևնոյն միտքն արտայայտել՝ յանկարծ որ և է սխալ ենք անում, ենթադրենք յարկ խօսքի մէջ «յ» տառի փոխարէն գրում ենք «հ», այն ժամանակ կարդալով վերև յիշած նախադասութիւնի՝ Ես երկրորդ հարկո՞ւմն եմ ապրում, մենք էլ չենք հասկանալ թէ ինչ ենք կարդում, որովհետև յարկ և հարկ խօսքերը տարբեր միտք ունեն։ Նոյն ձևով էլ կարող են մեզ շփոթեցնել առոգանութեան նշանների սխալ գործածութիւնները։ Ենթադրենք գրաւոր կերպով պատւիրած է ուսումնարանի վերակացուին. «Պատժե՛լ այս ինչ աշակերտին, չի կարելի նրան ներել», որ և մի որոշ միտք է արտայայտում։ Եթէ այդ նախադասու-

թեան առոգանութեան նշանները փոփոխենք, այն ժամանակ կարող ենք ստանալ և հետեւեալ նախադասութիւնը. «Պատժել այս ինչ աշակերտին չի կարելի, ներե՛լ նրան», որը առաջւայ նախադասութեան բոլորովին հակառակն է։ Ընթերցողը տեսնում է, որ ստորակէտն անգամ կարող է, մարդու պատժւելու և չըպատժւելու պատճառ դառնալ։ Ուրեմն արդէն պարզ է նրանց ուղիղ գործածութեան նշանակութիւնը։ Բայց այդ սխալները դեռ մի-մի նմուշներ են, ուրեմն հասկանալի է թէ սխալներով լի գրւածքը—թող նրա գրողը լինի փիլիսոփայ, թէև փիլիսոփան կոչւած չէ սխալներով լի գրւածքներ գրելու —որքա՜ն անհասկանալի, բայց գուցէ ցանկալի մտքերի, որքա՜ն անախորժութիւնների պատճառ կարող է դառնալ։ Ուղղագրութիւնը այդքան մեծ նշանակութիւն ունենալով, հասկանալի է, որ իւրաքանչիւր մի մարդ, ով կոչւած է մանուկ սերնդին կարդալ և գրել սովորեցնելու, պարտաւոր է նոյնքան ուշադրութիւն դարձնել իր սանիկի ուղղագրութեան վրայ, որքան նրա լաւ կարդալ իմանալուն վրայ. այլապէս նրա գործը չի կարելի իր կոչման համապատասխան համարել։ Իսկ ուղղագրութիւն սովորելու համար պէտք է գործնական, նպատակի հասցնող մեթոդներ իմանալ, թւաբանական կերպով բացատրել, քերականօրէ՛ն վերլուծել իւրաքանչիւր խօսքը և զանազան սխալ գրած տառերը համեմատել, իրար մէջ կապեր հաստատել ու այդպիսով զրգռել աշակերտի գիտակցութիւնը, որպէս զի նրա արած սխալները տեղ բռնեն ուրիշ մտապատկերների շարքում և հարկաւոր դէպքում կարողանան նոյնութեամբ վերարտադրւել. եթէ ոչ՝ աշակերտը միշտ բոբիկ կըմնայ ուղղագրութիւնից, որին այնքան կարևորութիւն տւինք։ Ուղղագրութիւնը աշակերտին կարելի է սովորեցնել զանազան եղանակներով, որոնցից կըյիշենք թելադրութիւնը և որ եւ է ոտանաւորի ուղիղ գրել սովորելը։ Երբ ուսուցիչը թելադրում է գրքից որ և է կտոր և ապա սկսում է աշակերտների ներկայութեամբ կամ թէ չէ տանը սխալները ուղղել

և ապա մանրամասնօրէն բացատրել իւրաքանչիւր սխալը՝ աշխատելով այդ սխալները որ և է կերպով կապել իրար հետ ու այդպիսով բոլորովին հասկանալի դարձնել սխալի ինչում կայանալը—այն ժամանակ աշակերտի ուղղագրութեան մէջ արած յառաջադիմութիւնը անուրանալի է: Իսկ երբ ուսուցիչը զանազան հանգամանքների պատճառով չէ ուզում գլխացաւանք պատճառել իրան—նրանց թելադրելով—այլ միայն պատուիրում է այս ինչ ոտանաւորը անգիր գրել սովորել, յայտնի բան է, չի հասնում իր նպատակին: Եւ ահա թէ ինչու: Ի՞նչ անել կուզէ, որ իւրաքանչիւր աշակերտ աշխատում է լաւ սովորել, որպէս զի անսխալ գրելու համար հինգ ստանայ. և ահա խեղճը ամբողջ ժամեր է գործ դնում, ամբողջ թերթեր սևացնում, որպէս զի սովորի իրան տուած ոտանաւորը անսխալ գրելու. նա միջից կէս է լինում թութակի նման անգիր անելու, սպառում է իր ուժերը և շատ անգամ կարողանում է անսխալ գրել, որի համար նա չափազանց ուրախանում է և փորձում է մի անգամ ևս կրկնել, որ ուսումնարանում կարողանայ նոյնութեամբ գրել: Բայց որքա՛ն է զարմանում և մինոյն ժամանակ վշտանում նա, երբ սխալներ է նկատում իր առաջին անգամ ուղիղ գրած նախադասութեան մէջ: Եւ ահա թթուած դէմքով նա նորից է սկսում սովորել, և միւս օրը ուսումնարանում հազիւ-հազ կարողանում է երկու կամ երեք սխալ անելով գրել իր դասը. ոմանք նոյն իսկ անսխալ են գըրում, որի համար և՛ մի գեղեցիկ հինգ են ստանում: Իսկ ուսուցիչը տետրակները տուն տանելով աչքի է անցկացնում, շատ քիչ սխալներ է գտնում նրանց մէջ և իր աշակերտների յառաջադիմութեամբ զմայլւում:

Մարտիրոս Դահրամանեանց

(Կշարունակուի)

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Վլիզա Օժեշկօ. **Եասի արկածները.** *Մանկական գրոյց, թարգմ. Գ. Գ. 40 եր. գինն է 10 կոպ.։*

—

«Եասի արկածները» պատմուածքը մի շատ գեղեցիկ գրուածք է, որի ընթերցանութիւնը մանուկներին շատ մեծ օգուտ կըբերէ։ Օժեշկոն իր այս պատմուածքի մէջ նկարագրել է հարուստ և քնքշացած շրջաններում մեծացած մի երեխայ, որին փոքրութիւնից սովորեցրել են նողկանք զգալ դէպի աղքատները—ձեադերը (լեհերէն նշանակում է աղքատ), այնպէս որ նա առանց երկիւղի չի կարողանում նրանց վրայ նայել։ Մի անգամ երեկոյեան դէմ պատահմամբ կորցնելով իր դայեակին և չըկարողանալով գտնել իր հայրենական տունը, նա երկար թափառումներից յետոյ, ընկնում է աղքատների և մուրացկանների թաղը և մի գիշեր անցկացնում նրանց հետ։ Այդ պատահմունքը շատ բարերար ազդեցութիւն է գործում նրա աղքատների մասին ունեցած կարծիքի դէպի յաւը փոխուելու վրայ՝ և այնուհետև նրա «ամենասիրելի զբօսնատեղին դարձաւ Բրուտների փողոցը, և ուրիշ նման փողոցներ, որտեղ խեղճ մարդկանց բնակարաններն ու ապաստարաններն են։ Եասն այլևս չէր վախենում ձեադերից։ Ընդհակառակն ծանօթանալով նըրանցից մի քանիսի հետ՝ սիրում էր նրանց հետ քաղցր մասլահաթներ անել և ամբողջ սրտով կարեկցում էր նրանց վշտերին ու թշւառութիւններին։ Երբեմն Եասը բերում էր «ձեադերին» իր հետ տուն և մխիթարում, կշտացնում ու ճանապարհ դնում»։

Գիրքը գրուած է շատ տաղանդաւոր կերպով և մեծ տպաւորութիւն է գործում. Այդպիսի գրքերը կարող են մեր մանկական գրադարաններին զարդ ծառայել։ Գրքի թարգմանութիւնը, որ կատարել է պ. Գ. Գ-ը, շատ հիանալի է, բուն ժողովրդական լեզւով է արուած և կարդացւում է ախորժակով։ Միայն թոյլ ենք տալիս մեզ նկատել, որ յարգելի թարգմանիչը տեղ տեղ գործածել է այնպիսի ժողովրդական բառեր, որոնք շատ տեղական են և միւս գաւառներում անհասկանալի։ Եթէ ի նկատի չունենանք այս չնչին պակասութիւնը, թարգմանութիւնից աւելի ոչինչ պահանջել չի կարելի։ Գինը,—ինչպէս հրատարակչական ընկերութեան վերջին հրատարակութիւնների գինը — շատ չափաւոր և հանրամատչելի է:

Տիպը մաքուր է։ սառասխալներ չեն պատահում։ Խորհուրդ ենք տալիս հայ ծնողներին ձեռք բերել այդ գիրքը։ W.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Մ տ ք ի ո յ ժ ը

—

Ֆրանսիացի յայտնի գրող Ժիւլ Վերնը իր բոլոր ճանապարհորդութիւնները կատարում է իր առանձնասենեակում. նա ունի մի ահագին երկրացոյց, և երբ պատրաստւում է մի նոր ճանապարհորդական նկարագրութիւն անել, ամենից առաջ, այդ երկրացոյցի վրայ մի տեղից մինչև միւսը՝ ուր վերջանալու է երևակայելի ճանապարհորդութիւնը՝ կարմիր գիծ է անցկացնում ևապա սկսում ուսումնասիրել այն երկիրները, որոնց միջով իր հերոսն է անցնելու. դրանից յետոյ նա դիւրըմբռնելի ձևով ընթերցող հասարակութեանը ծանօթացնում է այդ երկրների հետ։ Այդպիսով Ժիւլ Վերնը, զանազան երկրներում ճանապարհորդութիւնների այնպիսի ոգևորութեամբ նկարագրողը ինքն երբէք չէ ճանապարհորդել և ամենահանգիստ կերպով ապրում է իր տանը, Պարիզում։

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Типографія К. П. Мартиросіанца, Орб. ул. д. № 1—2

Սիրելի եւ յարգելի, իմ խմբագիր

Ես շատ վաղուց էի ուզում ձեզ նամակ գրել, գրել էի ուզում, շատ գրել... բայց չէի համարձակւում, որովհետև չէի տիրապետում մայրենի լեզւին և չէի կարողանում արտայայտել այն, ինչ որ զգում էի...

Իմ սիրելի խմբագիր, ներիր ինձ, ներիր, որովհետև ես վերցնում եմ իմ տղայական գրիչը և համարձակւում եմ ձեզ նամակ գրել։ Ներիր ինձ, որովհետև ես ձեր ժամանակը խանգարում եմ իմ չնչին նամակովս։

Ես ձեզ գրում եմ այն ինչ որ վաղուց էի զգում—իմ տղայական զգացմունքս..

Ես դեռ շատ փոքր էի, կլինէի 8—6 տարեկան անմեղ երեխայ, այն ժամանակը ես փնտռում էի իմ քեռուս (Ն. Ձանշամեան) գրքերը, որոնում էի իմ սիրելի „Աղբիւրի" №№-ը, վերցնում էի ու առանձնանում... ինձ չէր հետաքրքրում ոչ երեխայական անմեղ խաղերը, ոչ էլ քաղցրեղէնները, կարդում էի և որոնում էի իմ սրտի հաճոյքը այդ մանկական ամսագրի մէջ։

Ես այդ ժամանակ ստիպում էի իմ ծնողներիս, որ ինձ համար „Աղբիւր" ստանան, բայց նրանք ինձ և իմ խօսքերը երեխայական սովոր պահանջի տեղ ընդունեցին։

Երբ որ իմ քեռիս գնաց օտարութիւն, այն ժամանակ յարաբերութիւն չունէի մանկական ամսագրի հետ, առհասարակ մամուլի հետ։

Երկար ժամանակ ես կաշկանդւեցի ընտանիքում. ես իմ ծնողներիս միունճարն էի, միակը, դա էր պատճառը որ ինձ կաշկանդում էր...

Վերջապէս երբ որ անցեալ տարի ես վերջացրի իմ ուսումս քաղաքային ուսումնարանում (Գանձակ). այն ժամանակը ազատւեցի այդ գերութիւնից։ Ես եկայ Բաքու հաշւապահութիւն սովորելու. այդ ժամանակ ես ինձ ինչքան բախտաւոր համարեցի երբ որ ճանաչեցի գրադարան-ընթերցարանը։ Ես գտայ էլի իմ առաջւայ սիրելի „Աղբիւրը" և տեսայ որ այդ իմ սիրելիս աւելի աճել և քաղցրացել է... Ես ծանօթացայ դրա ընկերոջ Տարազի" հետ և իմ ուրախութեանս չափ չըկար...

Ես երդւեցայ որ իմ առաջի ռոճիկից բաժանորդ գրւեմ „Աղբիւր-Տարազին"։

Եւ փառք Աստծոյ, այսօր ես բաժանորդ եմ, սեպհական աշխատանքից բաժանորդ:

Հաւատացնում եմ ձեզ, որ այս օտարութեան մէջ իմ միակ ընկերը, վշտերիս և ուրախութիւններիս կարեկիցը „Աղբիւր-Տարազն" է։ Ես օրեր եմ համարում մինչև համարները ստանում եմ։ Ախ, սիրելի խմբագիր, ես ուզում եմ դարձեալ բաժանորդ լինեմ և „Թատրոն" հանդէսին և Ազգագրական Հանդէսին և Մուրճին... Եթէ Աստւած յաջողութիւն կըտայ, այն ժամանակը այդ էլ կանեմ:

Ամառս կըվերադառնամ հայրենիք (Գանձակ). յոյսով եմ որ այնտեղ „Աղբիւր-Տարազի" համար ուրիշ բաժանորդներ գտնել—մեծ յոյսեր ունեմ...

Դարձեալ խնդրում եմ ձեզանից ներողութիւն. ներեցէք, ես ձեզ իմ սրտակից հայրն եմ համարում։

Դէ՞հ ցտեսութիւն—

Կըխնդրեմ ես Ամենակարող Աստւածանից, ձեզ համար երկար կեանք, յաջողութիւն և կրակոտ յոյսեր...

Ձեր Մնացականեան

ՍՏՐԳԵՏԻ

«Ալմաստ» վէպ բարձր-հայոց կեան-քից. գինն է. . . . 2 ր.

«Խեւ-Կարապետ» վէպ հայ կաթոլիկ-ների կեանքից . . . . 1 ր.

«Քոռ Եղիկ» վէպ շիրակ. կեան-քից. . . . . 30 կ.

Հինգ վէպ Սազի գիւղացիների (թրքահայերի) իրական կեանքից . . . . 30 կ.

Ժառանգներ Քղի գաւառի (թըր-քահայերի, կեանքից. . 30 կ.

«Հուշան» ողբերգ. օպերայի համար թուրքահայոց կեանքից . 1 ր.

«Սարրաֆ» ողբերգութիւն տաճկ. պատ. կեանքից . . . 30 կ.

Բերսայի Առաքելը թրքահայերի կեանքից . . . . 30 կ.

Դիմել Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցին եւ Կովկասի քա-ղաքների հայ գրավաճառներին։

Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս. Въ Нахичевань н-Д, въ Типографію Бр. Аваковыхъ, **որոնք կըլինին սովորական զիջումն։**

35—25

Ե. ԹՈՓՉԵԱՆԻ

ԻՍԼԱՄ

Պատկերազարդ պատմական տեսութիւն

Գինը 30 կոպ.

Վաճառւում է Կենտրոնական գրա-վաճառանոցում և Տարազի խմբագրա-տանը։ 25—25

Լոյս տեսան եւ վաճառւում են

Կարապետ Ափինեանի

1901 թ.

Ծոցի և պատի

(Շիրակ)

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Գները՝ ծոցինը—20 կ., պատինը—50 կ ։ գումարով գնողներին լինում է զիջում

Դիմել՝ Александрополь, Карапету Апиняну, Alexandrople Karapet Apinian (Caucasse). 0—3

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

Ներկայ 1900 թ. բաժանորդա-գրութիւնը շարունակւում է

Տարեկան գինը 3 ր., արտա-սահման՝ 4 ր.

Հասցէն՝ ТИФЛИСЪ. Редакція жур. „АГБЮРЪ“.

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՕՂԼԻՏԸ

Պատշաճ բացատրութիւններով պատ-կերներ երկրաշարժից վնասուած գիւ-ղերի.

Գինն է 25 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, ред. „Таразъ“.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏՆԵՐ,

Եթէ կուզէք նորուս երգիչներին ձեռքը տալ՝

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ

ամենայարմար տետրը, դիմեցէք, Армавиръ (Кубан. обл.) Регенту Симеону Шааняицъ.

Գինը 15 կոպ.

50-ով պահանջողին 20% զիջում։

Լոյս տեսաւ

Ե. Շահազիզի

ՄԻՐՏԻՉ ՅՈՎՍԷՓԵԱՆ ԷՄԻՆ

ԳԻՐՔԸ

վաճառւում է 60 կ. **Կենդրոնական** *գրավաճառանոցում և հեղինակի մօտ, Նոր-Նախիջևանում։* **Հասցէն** *հեղի-նակի.* Нахичевань н/Д, Ервանду Шахъ-Азизъ. 5—5

Բացւած է 1901 թ. բաժանորդագրութիւնը

XIX ԱՂԲԻՒՐ XIX

Միամսեայ պատկերազարդ հանդէս, մանուկների, ծնողների և դաստիարակների համար։

Կրճատարակւի նոյն ուղղութեամբ եւ աշխատակիցների մասնակցութեամբ։
Պրէմիա և յաւելւածներ ստանում են Աղբիւր և Տարազ միևնոյն հասցէով ստացող բաժանորդները։

ՆՊԱՏԱԿ. Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը։

Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր։

ԾՐԱԳԻՐ Ա. Մանկական բաժին. Մանրավէպ, Զրոյց, Հէքիաթ, Ճանապարհորդութիւն, Կենսագրութիւն, Բանաստեղծութիւն։ Գիտութիւն և արւեստ։ Նոր լուրեր։ Այլ և այլք։ Զւարճալիք։ Մանկական, Ֆրէօբէլեան, շախմատի և այլ խաղեր. Ռեբուսներ, թւաբանական խնդիրներ. Անեկդոտ. Հանելուկ, Երգեր նոտաներով։

Բ. բաժին. Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ նամակներ և տեղեկութիւններ։ Առաջարկութիւններ։ Խորհուրդներ։ Մատենախօսութիւն և Նոր գրքեր։ Խառն լուրեր։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան բաժանորդագինն **3** ր. արտասահման 10 Ֆր.
Խնդրում ենք Աղբիւր-Տարազին բաժանորդ գրւել ցանկացողները անճապարեն փութով ստորագրւել, որպէս զի նախորդ տարիների նման նոր բաժանորդ գրւողները չզրկւեն Աղբիւր-Տարազի առաջին №№-ից։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція иллюст. жур. „Агбюръ. Tiflis. (Caucase). Réd. du jour. «Agbür».

№ 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1900

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԲԻՒՐ, № 11.

Ա. Բաժին

Պաշտօնական.—Բռնուած ճագարը (*պատկեր ոտանաւորով*).—Ս.։ Սկիւռը եւ գայլը (*փոխադր.*).—Ե. Ֆրանգ։ Օտարի օգուտը.—Տիկին Շուշ. Կուրղինեան։ Ի՞նչի համար աղօթել (*Մարիա Կոնոպնիցկայից*).—Տիկին-Բիւրեղ։ Մեղուներ (*Աւանդութիւն*).—*Փոխադր. Ս. Կար.*։ Գիւղացու կեանքը, *Ձմեռ* (*ոտանաւոր*). — *Յովհ. Կոստանեանց*։ «Րիկի-տիկի-տաւի», *գրոյց Ռ. Կիպլինգի* (*Փոխադրութիւն*)—*Վ. Փափազեան*։ Լոգարանի մօտ (*պատկեր*)։ Որբուկ (*ոտանաւոր պատկերով*).—*Մարտիրոս Ղահրամանեան*։ Աշուն.—*Սիմ. Գ. Պապիեանց*։ Ժայռը (*ոտանաւոր*).—*Սիմէօն Սափարեանց*։ Ըմբոստ այծերն ու խոնարհ ոչխարները.—*Լ. Մարկոսեան*։ Ջրվէժ.—*Սիմէօն Սափարեանց*։

Զ ու ա ր ճ ա լ ի ք

Գրափոխութիւն.—*Գ. Բաբուրեանց*։

Հանելուկներ։ Բացատրութիւններ։

Որսորդի ընտանիքը (*պատկեր*)։

Բ. Բաժին.

Թելադրութի՞ւնը, թէ որ եւ է ոտանաւորի ուղիղ գրել սովորելը (*վերջ*). — *Մարտիրոս Ղահրամանեանց*։ Բարոյական դաստիարակութեան մասին (*կըշարունակուի*).—Ջ. Տ.-Գ.։

Յայտարարութիւններ։

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

—

Հրաւիրում ենք մեր մշտական բաժանորդներին իրանց շրջանում տարածել Աղբիւր *և* Տարազ, *մեր բաժանորդներից մի քանիսին ուղարկեցինք անդորրագրեր, որպէս զի նրանք առաջարկեն ցանկացողներին։ Եթէ յիրաւի, մեր ընթերցողները փափագում են տեսնել* Աղբիւր *և* Տարազ *աւելի ճոխացած, նրանք չըպէտք է բաւականանան միայն իրանք բաժանորդ գրուելով, այլ պէտք է հայութեան բոլոր շրջաններում ցոյց տան մեր հանդէսները, ծանօթացնեն մեր ուղղութեան, նպատակի և ծրագրի հետ, ապա թողնեն հային (*եթէ յիրաւի նա հայ է*) որ նա որոշէ իր անելիքը—գրուել* Աղբիւր-Տարազին, *վճարել տարին 10 ռուբ. թէ ոչ։*

Թիւրիմացութիւնների տեղիք չըտալու համար, պարտականութիւն ենք համարում կրկին ու կրկին անգամ յայտնել, որ միայն Տարազ *կամ* Աղբիւր *ստացողը իրաւունք չունի ստանալու ոչ մի պրէմիա, յաւելուած, պատկեր և այլն, և այլն։*